

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2019 թվականի դեկտեմբերի 10 -ին ժամը 12-ին Արարատի մարզի Մրգանուշ համայնքում , համայնքապետարանի շենքում կայանալու է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ վաճառք և մրցույթ վարձակալության տրամադրելու համար: Աճուրդ վաճառքի է ներկայացվում բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման 0.096հա հողամաս, մրցույթի է ներկայացվում արտադրական նշանակության 0,257հա հողամասը հետևյալ կողերով , լոտերով և մեկնարկային գներով.

Լոտ 1. 0.096հա բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման հողամասի /ծածկագիր 03-060-0030-0003/ մեկնարկային գինը՝ 506880 դրամ: Գտնվում է բնակավայրի տարածքում, միջհամայնքային ճանապարհից 200մետր հեռավորությամբ , ապահովված է սեզոնային ոռոգման ջրով:

Աճուրդ վաճառքի մեկնարկային գնի հավելման նվազագույն չափ սահմանել 26000 /քսանվեց հազար/ դրամ:

Լոտ 2. 0.257հա արտադրական նշանակության հողամաս /ծածկագիր 03-060-0003-0074/ մեկնարկային գինը՝ 13570 դրամ: Գտնվում է բնակավայրի տարածքում, ունի էլ.հոսանքի հնարավորություն:

Մրցույթի մեկնարկային գնի հավելման նվազագույն չափ սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ չկան: Հայտերը ընդունվում են մինչև դեկտեմբերի 6-ը ներառյալ: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Մրգանուշի համայնքապետարան մրցութային հանձնաժողովին:

Հեռախոսներ՝ (093) 66 -06 -02 , (098) 93 -13 -37

